Ամսոյս 2-ին խօլերայից բռնուելով, կնքեց իւր մահկանացուն Ատրպատականի Առաջնորդ ՍՏԵՓԱՆՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԽԻԹԱՐԵԱՆԸ 47 տարեկան հասակում։ Հանգուցեալը ժառանգաւորաց դպրոցի լաւ աշակերտներից էր։ Միաբան եղաւ 1857 թուին։ 1863-ին ձեռնադրուեց Սարկաւագ, իսկ մի տարուց յետոյ Վարդապետ։ 1863—1866-ը եղել է անդամ վանական կառավարութեան։ 1866—1867 թ. վարել է Բայազիտի գործակալի պաշտօն, իսկ 1867 թ. նորից նշանակուեց վանական կառավարութեան անդամ և մի տարուց յետոյ ստացաւ ծայրագոյն Վարդապետութիւն։ 1869-ին ուղարկուեց Տաթևի վանքը՝ իբրև վանահայր և յաջորդ, ուր մնաց մինչև 1872 թ։ Ապա կարգուեցաւ քննիչ Գիշնևի կալուածական գործերի և հաշիւների և 1877-ից մինչև 1879 թ. վարեց նոյն կալուածների կառավարչի պաշտօնը։ 1882 թուի մայիսի 9-ին Երջանկայիշատակ Գէորգ Կաթողիկոսից ձեռնադրուեց Եպիսկոպոս, իսկ 1886 թ. մայիսի 14-ին հանգուցեալ Մակար Կաթողիկոսը նշանակեց նրան առաջնորդ Ատրպատականի թեմի, որպիսի պաշտօն և վարում էր մինչև մահը։ Հանգուցեալը պարգևատրուած էր ծաղկեայ փիլօնով, վարդապետական լանջախաչով և եպիսկոպոսական պնակէով. թողել է մի քանի գրաւոր աշխատութիւններ։

Մաղթենք Արարչին, որ հանգուցեալին երկնային արքայութիւն պարգևէ։

Ամսոյս 1-ին երկարատև հիւանդութիւնից յետոյ կոչոր ամարանոցում վախճանուեց Թիֆլիսի թեմի առաջնորդ ՄԱՄԲՐԷ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԱՆԱՍԱՐԵԱՆԸ 48 տարեկան հասակում։ Հանգուցեալը իւր ուսումն առել էր Ս. Էջմիածնայ ժառանգաւորաց դպրոցում։ 1864 թ. ձեռնադրուել է սարկաւագ, իսկ մի տարուց յետոյ վարդապետ. 1868-ին կարգուել է յաջորդ Դօրոյ վիճակի, 1871-ին նշանակուել է վանահայր Նոր-Նախիջևանի Ս. Խաչ վանքում։ 1875-ին կարգուել է քննիչ Նոր-Բայազիդի գաւառի հոգևոր գործերի, 1877-ին յաջորդ Հին-Նախիջևանի, իսկ այդտեղից— նախանգամ Թիֆլիզի կանսիստորիայի և վանահայր Ս. Սարգիս ուխտատեղւոյ։ 1883-ին կարգուել է յաջորդ Ախալցխայի վիճակի և մի տարուց յետոյ՝ բարձրագոյն հաստատութեամբ —անդամ Ս. Էջմիածնի Սինոդի։ 1886 թ. հանգուցեալ Մակար կաթողիկոսից ձեռնադրուել է Եպիսկոպոս և 1889 թ. հաստատուել է Թիֆլիզի թեմի առաջնորդ, որպիսի պաշտօնում և կնքեց իւր մահկանացուն։ Մամբրէ Եպիսկոպոսը վարձատրուած էր ծաղկեայ փիլօնով, լանջական խաչով, եպիսկոպոսական պնակէով և Ս. Աննայի 2-դ կարգի շքանշանով։

Մաղթենք հանգուցեալոյն հանգիստ և երկնից արքայութիւն։

Օգոստոսի 23-ին հեռագիրը գուժեց մեր տաղանդաւոր բանաստեղծ ՌԱՓԱՅԷԼ ՊԱՏԿԱՆԵԱՆԻ մահը։ Թէ որքան մեծ է այդ կորուստը մեզ համար, այդ գիտեն ամենքը։ Այո՛, կորուստը անփոխարինելի է և վշտապատ։ Նա մեզանից վարձատրութիւն և դափնիներ չէր խնդրում, այլ որպէս փոթորկալից ովկեան, իրեն սրտին մէջ փրփրացող ալիքների շառաչիւնի հազիւ մի մասն էր մեզ հաղորդում այդ անյաղթելի փոթորիկներից թուլացած կրծքից։ Մեր պարտականութիւնն է յարգել, անջնջելի անել մեր սրտից այդ մեծ մարդու՝ հայրենասիրի յիշատակը, տպագրել մեր սրտի տախտակի վերայ նրա երկնային պատգամները և մաղթել Արարչին, որ նրան երկնային հանգիստ պարգևի և նրա գերեզմանի իւրաքանչիւր փոշուց նրա պէս արժանաւոր զաւակներ պարգևի ազգին։